# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՍԱՐԻԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
# ՂԵԿԱՎԱՐ

«01» դեկտեմբեր 2016թ — ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Մեծ Սարիար

№ 53

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝**
**Հ.ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Սիմոնյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի դրույթի համաձայն՝ կից ներկայացվում են ՀՀ Շիրակի մարզի Մեծ Սարիարի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 17-Ն, 18, 19-Ն, 20, 21, 22 և 23-Ն որոշումները:

Առդիր՝ 30 թերթ:

Հարգանքներով՝

*Համայնքի ղեկավար՝* *Բ.Ավետիսյան*

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 12097-16
01. 12 2016թ.

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
### ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 17-Ն

28 նոյեմբերի 2016 թվական — գյուղ Մեծ Սարիար

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի ԹԻՎ 13-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով

Համայնքի ավագանին որոշում է.

1.Ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիար համայնքի ավագանու կանոնակարգը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիար համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիար համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին» թիվ 13-Ն որոշումը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | Կողմ 5 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |
|---|---|---|---|
| ԱՐԱՅԻԿ ԳԱՖԱՐՅԱՆ | [signature] | ------------ | ------------ |
| ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ | [signature] | ------------ | ------------ |
| ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ | [signature] | ------------ | ------------ |
| ԿԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ | [signature] | ------------ | ------------ |
| ԱՐԹՈՒՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ | [signature] | ------------ | ------------ |

ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature, stamp] ԲԱԲԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

28 նոյեմբեր 2016 թվական
գյուղ Մեծ Սարիար

ՀԱՎԵԼՎԱԾ՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Մեծ Սարիար համայնքի ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 28-ի թիվ 17-Ն որոշման

# Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## *ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ*
### *ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ*

1.Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և համայնքի բնակչության բարեկեցության բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ իրականացնում է ժողովրդի իշխանությունը, օրենքի շրջանակներում ապահովում է համայնքային խնդիրների լուծումը և տնօրինում համայնքային սեփականությունը:

2.Համայնքի ավագանին կազմված է 5 (հինգ) անդամներից և գործում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գյուղ Մեծ Սարիար 1-ին փողոց, շենք 1 հասցեում՝ համայնքապետարանի շենքում:

3.Սույն կանոնակարգն ընդունված է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա:

4.Սույն կանոնակարգը նպատակաուղղված է Մեծ Սարիար համայնքի ավագանու, ավագանու հանձնաժողովների և անդամների գործառույթների արդյունավետ կատարմանը, ինչպես նաև նրանց փոխգործակցությանը համայնքապետարանի աշխատակազմի հետ տեղական ինքնակառավարման իրականացման գործում:

5.Սույն կանոնակարգը կարգավորում է ավագանու նիստերի անցկացման վայրը, կարգը, ինչպես նաև ավագանու որոշումների նախագծերի ներկայացման, քննարկման, ընդունման և հրապարակման կարգը:

### *ԳԼՈՒԽ 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ*

6.Համայնքի ավագանին գործում է սույն կանոնակարգին համապատասխան՝ նիստերի, ինչպես նաև իր ստեղծած մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովների միջոցով:

7.Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս քան երկու ամիսը մեկ անգամ: Կարող են անցկացվել նաև ավագանու արտահերթ նիստեր:

8.Համայնքի ղեկավարը համայնքի նստավայրում անհրաժեշտ պայմաններ է ստեղծում համայնքի ավագանու՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով նախատեսնված կարգով գործունեությունն իրականացնելու համար:

9.Համայնքի ավագանու գործունեությունը հիմնվում է հարցերի ազատ քննարկման և կոլեկտիվ լուծման սկզբունքների վրա:

10 .Համայնքի ավագանու աշխատանքային լեզուն հայերենն է:

## *ԲԱԺԻՆ 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԸ*

### *ԳԼՈՒԽ 3. ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ*

11.Առաջին նիստի բացման առթիվ ողջույնի ելույթով հանդես է գալիս համայնքի ղեկավարը կամ պաշտոնակատարը, որը և վարում է նիստը:

12.Նիստը վարողը ներկայացնում է ավագանու անդամներին՝ կարդալով յուրաքանչյուրի անուն ազգանունը, մասնագիտությունը և կուսակցական պատկանելությունը:

13.Ավագանու անդամը հանդիսավոր պայմաններում, նորընտիր ավագանու առաջին նիստի ժամանակ երդվում է.

**Ես -------------------------------------- , ստանձնելով ՀՀ Շիրակի մարզի Մեծ Սարիար համայնքի ավագանու անդամի լիազորությունները, երդվում եմ իմ ողջ գործունեության ընթացքում առաջնորդվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ու օրենքներով, անշեղորեն պահպանել Հայաստանի Հանրապետության քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, գործել ի նպաստ համայնքի զարգացման ու բարօրության:**

14. Երդումը տրվում է անհատական կարգով, տեքստի ընթերցմամբ:

15. Ավագանու անդամը ստորագրում է իր ընթերցած տեքստը:

### *ԳԼՈՒԽ 4. ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ*

16. Ավագանու նիստը սկսվում է օրակարգի հաստատմամբ:

17.Ավագանու նիստի ժամանակ օրակարգում ներառված հարցերի հերթականությունը կարող է փոխվել ավագանու որոշմամբ:

18.Օրակարգում ընդգրկված որոշման նախագծերը քննարկվում և քվեարկվում են առանձին - առանձին:

### *ԳԼՈՒԽ 5. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԸՆԴՀԱՏՄԱՆ և ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ*

19.Նիստերը կարող են ընդհատվել ավագանու որոշմամբ, նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ՝ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի առաջարկով:

20.Ավագանու որոշմամբ, նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ՝ օրակարգում ընդգրկված հարցը կարող է տեղափոխվել հաջորդ նիստերի քննարկմանը:

### *ԳԼՈՒԽ 6. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԸ*

21.Արտահերթ նիստ հրավիրելու մասին ավագանու անդամներին տեղյակ է պահվում համայնքապետարանի աշխատակազմի միջոցով:

22.Ավագանու արտահերթ նիստը համարվում է ավարտված, եթե սպառվել են օրակարգի բոլոր հարցերը:

23.Արտահերթ նիստը կարող է ընդհատվել ավագանու որոշմամբ:

24.Արտահերթ և հերթական նիստերում քննարկվող հարցերի որոշման նախագծերի ընդունման համար անհրաժեշտ փաստաթղթերին ներկայացվում են համանման պահանջներ:

## ԳԼՈՒԽ 7. ՆԻՍՏԵՐԻ ԻՐԱՎԱԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

25.Ավագանու նիստերը սկսվելուց առաջ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը անց է կացնում նիստին ներկայացած և քվեարկություններին մասնակցած ավագանու անդամների գրանցում:

26.Գրանցումներն արվում են հատուկ մատյանում, որտեղ նշվում է նաև նիստից ավագանու անդամի բացակայելու պատճառը:

27.Համայնքի ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են ավագանու անդամների կեսից ավելին:

28.Նիստի իրավազորությունը վավերացվում է նաև նիստի ընդհատումներից և ընդմիջումներից հետո:

## ԳԼՈՒԽ 8. ԴՌՆԲԱՑ ԵՎ ԴՌՆՓԱԿ ՆԻՍՏԵՐԸ

29.Համայնքի ավագանու նիստերը դռնբաց են: Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստերին մասնակցում են համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները:

30.Համայնքի ավագանին նիստին կարող է հրավիրել և լսել ցանկացած անձի:

31.Ավագանու որոշումներն ու ուղերձները կարող են հրապարակվել ռադիոյով, հեռուստատեսությամբ, մամուլում, հասարակական վայրերում կամ այլ ձևով՝ բնակչությանն այն մատչելի դարձնելու համար:

32.Առանձին դեպքերում դռնփակ նիստի առաջարկով կարող է հանդես գալ համայնքի ղեկավարը կամ ավագանու անդամը: Ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ նիստ:

33.Դռնփակ նիստում, բացի ավագանու անդամներից, նիստը վարողից և արձանագրողից իրավունք ունեն ներկա գտնվել միայն ավագանու որոշմամբ հրավիրված անձինք:

34.Դռնփակ նիստում ընդունած որոշումները հրատարակվում են:

## ԳԼՈՒԽ 9. ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

35.Համայնքի ավագանու նիստը հրավիրում և վարում է համայնքի ղեկավարը կամ պաշտոնակատարը: Նրանք ունեն խորհրդակցական ձայնի իրավունք:

36.Նիստը վարողը՝

1) բացում, ընդհատում և փակում է նիստը.

2) ձայն է տալիս ելույթ ունեցողներին.

3)կազմակերպում է քվեարկության անցկացումը և դրանց արդյունքների հրապարակումը.

4)կարող է ընդմիջել ելույթները՝ նիստի բնականոն ընթացքը վերականգնելու նպատակով:

## ԳԼՈՒԽ 10. ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ

37.Համայնքի ավագանու նիստերի արձանագրությունն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

38.Նիստերի արձանագրությունները պահպանվում են համայնքի նստավայրում:

39.Նիստերի ավարտից հետո՝ 3 օրվա ընթացքում, այդ նիստերի արձանագրությունները վավերացվում են նիստին ներկա ավագանու անդամների կողմից:

## ԳԼՈՒԽ 11. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

40. Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ նաև համայնքում հաշվառված, տասնվեց տարին լրացած անձանց ոչ պակաս, քան ___ տոկոսը՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով

41. Բնակչությունը իրավունք ունի մասնակցելու համայնքի ավագանու նիստերին: Համայնքի ղեկավարը պարտավոր է ապահովելու անհրաժեշտ աշխատանքային պայմաններ բնակչության, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և լրատվամիջոցների մասնակցության համար: Ցանկացած անհատ կամ խումբ, ով ցանկանում է դիմել ավագանուն հերթական նիստի ժամանակ օրակարգային հարցերի վերաբերյալ, պետք է իր հարցադրումը գրավոր ներկայացնի աշխատակազմի ղեկավարին նախքան նիստի սկսելը: Սակայն, ավագանին ինքն է որոշում նիստի ժամանակ անհատին կամ խմբին լսելու հարցը:

42.Բնակչության հարցադրումները և առաջարկությունները օրակարգային ցանկացած հարցի վերաբերյալ թույլատրվում են ավագանու նիստին ներկա անդամների ձայների մեկ երրորդով: Ավագանու հերթական նիստերի վերջում հատկացվում է 30 րոպե ժամանակ՝ քաղաքացիների կողմից ավագանուն ուղղված ցանկացած հարցադրմանը, որը վերաբերում է համայնքին, պատասխանելու համար:

43.Հարցադրումների և առաջարկությունների հեղինակը ներկայանում է՝ նշելով իր անունն ու ազգանունը: Համայնքի ղեկավարը հերթականությամբ խոսք է տրամադրում ելույթ ունենալ ցանկացողներին:

44.Հարցադրումների և առաջարկությունների հիման վրա ավագանին նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ կարող է դիմել հանձնաժողովներին կամ համայնքի ղեկավարի աշխատակազմին լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու հարցի դիտարկման համար:

45.Բնակիչները, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչները պարտավոր են զբաղեցնել իրենց համար նախատեսված տեղերը և հետևել սույն կանոնակարգի 9-րդ հոդվածով հաստատված ավագանու նիստի վարման կարգին:

## ԲԱԺԻՆ 3. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

### ԳԼՈՒԽ 12. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

46.Հարցերի քննարկումը սկսվում է նիստի օրակարգի հաստատումից հետո:

47.Օրակարգային հարցի քննարկումը տեղի է ունենում հետևյալ հաջորդականությամբ՝

1) հիմնական զեկուցողի ելույթը.
2) հարցեր զեկուցողին.
3) հարակից զեկուցողի ելույթը.
4) հարցեր հարակից զեկուցողին.
5) մտքերի փոխանակություն.
6) եզրափակիչ ելույթներ.
7) քվեարկություն:

48.Որպես հիմնական զեկուցող հանդես է գալիս տվյալ հարցի հեղինակը, (համայնքի բնակիչների նախաձեռնությամբ քննարկվող հարցի դեպքում՝ նախաձեռնող բնակիչների ընտրած ներկայացուցիչը) իսկ որպես հարակից զեկուցող՝ հանձնաժողովի ներկայացուցիչը:

49.Եթե հարցի քննարկումը ընդմիջվել է, ապա ընդմիջման ժամկետը լրանալուց հետո քննարկումը վերսկսվում է այն փուլից , որից ընդմիջվել էր:

50.Հարցի քննարկման ընթացքում հատկացվում են՝

1) զեկուցողի համար՝ մինչև 15 րոպե.
2) հարցերի համար՝ մինչև 3 րոպե.
3) ելույթների համար՝ մինչև 5- ական րոպե.
4) եզրափակիչ ելույթի համար՝մինչև 10 -ական րոպե:

51.Քննարկվող հարցի վերաբերյալ զեկուցողի առաջարկությունը քվեարկության է դրվում առաջին հերթին: Զեկուցողի առաջարկությունը չընդունվելու դեպքում քվեարկվում են մտքերի փոխանակության ժամանակ արված մյուս առաջարկությունները: Այդ առաջարկությունների քվեարկման հաջորդականությունը որոշում է համայնքի ղեկավարը:

### ԳԼՈՒԽ 13. ՀԱՐՑԵՐ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

52.Հարցեր տալու համար ավագանու անդամի հերթագրումը իրականացնում է նիստը վարողը:

53.Հարցերը տրվում են ըստ հերթագրման հաջորդականության, նիստը վարողի հայտարարությամբ:

54.Եթե հարց տվողի և զեկուցողի միջև սկսվում է բանավեճ, ապա նիստը վարողը կարող է դադարեցնել հարցադրումը:

55.Մտքերի փոխանակության ընթացքում ելույթ ունեցողին հարցեր չեն տրվում:

### ԳԼՈՒԽ 14. ՄՏՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

56.Մտքերի փոխանակության ժամանակ ավագանու յուրաքանչյուր անդամին ելույթ ունենալու հնարավորություն է տրվում:

57.Ավագանու անդամը կարող է նույն հարցի շուրջ երկրորդ անգամ ելույթ ունենալ միայն այն դեպքում, եթե ելույթով հանդես են եկել մյուս բոլոր ցանկություն ունեցողները:

58.Մտքերի փոխանակությանը, բացի ավագանու անդամներից և համայնքի ղեկավարից, այլ անձինք կարող են մասնակցել միայն ավագանու համաձայնությամբ:

59.Ավագանու անդամները ելույթ ունենալու ցանկությունը հայտնում են նստած տեղից ձեռք բարձրացնելու միջոցով կամ համայնքի ղեկավարին նախապես գրավոր իրազեկման միջոցով:

60.Ելույթ ունեցողները հանդես են գալիս նիստը վարողի հայտարարությամբ:

61.Համայնքի ղեկավարը դադարեցնում է համայնքի ավագանու ելույթը, եթե վերջինս գերազանցում է իրեն հատկացված ժամանակը նախազգուշացումից հետո:

### ԳԼՈՒԽ 15. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

62.Քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե այլ բան նախատեսնված չէ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով:

63.Ավագանու քվեարկությանը կարող են դրվել միայն սույն կանոնակարգով սահմանված կարգով ավագանու անդամներին բաժանված և քննարկված նախագծերը:

64.Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների ազգանունները, որոնց դիմաց նրանք ստորագրում են:

65.Համայնքի ավագանու որոշումը կնքում է համայնքի ղեկավարը:

### ԳԼՈՒԽ 16. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

66.Նիստը վարողը քվեարկությունից առաջ կրկնում է քվեարկության դրվող առաջարկությունները, ճշտում է դրանց ձևակերպումները և հիշեցնում է նաև, թե ձայների ինչ քանակով է ընդունվում որոշումը:

67.Քվեարկությունը իրականացվում է նիստը վարողի հայտարարությամբ: Ձայները հաշվում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

68.Ավագանու անդամը քվեարկում է անձամբ՝ կողմ, դեմ, ձեռնպահ:

69.Քվեարկության ավարտից հետո նիստը վարողը հրապարակում է քվեարկության արդյունքները:

## ԲԱԺԻՆ 4. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԸ

### ԳԼՈՒԽ 17.ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

70. Համայնքի ավագանու անդամը իրավունք ունի՝

1) Հարցեր ուղղել համայնքի ղեկավարին և ստանալ բանավոր կամ գրավոր պատասխան ավագանու հաջորդ հերթական նիստի ժամանակ, եթե ավագանին այլ որոշում չի ընդունում.

2). Հնարավորության դեպքում մասնակցել ավագանու վերապատրաստման դասընթացներին. ինչպես նաև փորձի փոխանակման այցերին:

3) Համայնքի ավագանու անդամն ունի «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված այլ իրավունքներ:

## ԳԼՈՒԽ 18. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

71.Համայնքի ավագանու անդամը պարտավոր է իր գործունեության ընթացքում առաջնորդվել օրենքով և համայնքի բարօրությանն ուղղված համոզմունքով:

72.Համայնքի ավագանու անդամը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

1) մասնակցել ավագանու այն հանձնաժողովների նիստերին, որոնց կազմում նա ընդգրկված է.

2) նախապես ծանոթանալ իրեն փոխանցվող քննարկման ենթակա նյութերին.

3)ծանոթանալ քաղաքացիներից ստացված դիմումներին և օրենքով սահմանված կարգով պատասխանել դրանց.

4)իրազեկ լինել տեղական ինքնակառավարմանը վերաբերող օրենսդրությանը.

5)հետևել համայնքի ավագանու և համայնքապետարանի աշխատակազմի գործունեությանը վերաբերվող նյութերի լուսաբանմանը տեղական զանգվածային լրատվության միջոցներում.

6) առաջնորդվել համայնքի ավագանու հաստատված կանոնակարգով:

7) համայնքի ավագանու անդամն ունի «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով սահմանված այլ պարտականություններ:

## ԳԼՈՒԽ 19. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻՑ ԱՆՀԱՐԳԵԼԻ ԲԱՑԱԿԱՅԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

73.Ավագանու անդամների մասնակցությունը նիստերին ու քվեարկություններին հաշվառում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

74.Աշխատակազմի քարտուղարը եռամսյակը մեկ անգամ ավագանու անդամներին տեղեկանք է տալիս նախորդ նիստերից կամ քվեարկություններից իրենց բացակայության մասին:

75.Նիստերից ու քվեարկություններից իր բացակայությության պատճառի մասին ավագանու անդամը տեղեկացնում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին: Աշխատակազմի քարտուղարը ավագանու նիստի ժամանակ հրապարակում է ավագանու անդամի բացակայության պատճառը, որը և արձանագրվում է:

76.Ավագանու անդամը նիստերից կամ քվեարկություններից իր բացակայության պատճառի մասին աշխատակազմի քարտուղարին, սույն կանոնակարգով սահմանված կարգով, չտեղեկացնելու դեպքում բացակայությունը համարվում է անհարգելի և արձանագրվում է համապատասխանաբար: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ աշխատակազմի քարտուղարին ներկայացվում է անաշխատունակության թերթիկ կամ տեղեկանք բժշկից:

77.Աշխատակազմի քարտուղարի կողմից տարվող հաշվառման հիման վրա, համայնքի ղեկավարը կամ ավագանու անդամը հերթական նիստի քննարկմանն է ներկայացնում ավագանու որոշման նախագիծը՝ մեկ տարվա ընթացքում նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից ավագանու անդամի բացակայելն անհարգելի համարելու մասին: Որոշման նախագծին կցվում է նիստերից կամ քվեարկություններից ավագանու անդամի բացակայության արձանագրված պատճառները:

78.Ավագանու անդամն առնվազն 7 օր առաջ գրավոր տեղեկացվում է ավագանու նիստում իր բացակայությունների հարցի քննարկման մասին: Ավագանու անդամի բացակայության դեպքում,

հարցի քննարկումը հետաձգվում է մինչև հաջորդ հերթական կամ արտահերթ նիստը, որտեղ այն քննարկվում է անկախ նրա ներկայությունից:

79.Յուրաքանչյուր ավագանու անդամի բացակայությունների վերաբերյալ որոշման նախագիծը քննարկվում է առանձին՝ սույն կանոնակարգի 3.1-րդ հոդվածով սահմանված կարգով: Քննարկման ընթացքում ավագանու անդամը կարող է ելույթ ունենալ, պատասխանել հարցերին, հանդես գալ մինչև 10 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով:

80.Նիստերի կամ քվեարկությունների կեսից ավելիին ավագանու անդամի բացակայելն անհարգելի համարելու մասին համայնքի ավագանու որոշումն ընդունվում է նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ:

## ԳԼՈՒԽ 20. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ

81.Ավագանու անդամը չի կարող մասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր ընտանիքի անդամների և մերձավոր բարեկամների (ծնող, քույր, եղբայր, երեխա) շահերին:

82.Եթե առկա է վերը նշված հանգամանքներից որևէ մեկը, ապա համայնքի ավագանին տեղեկացվում է դրա մասին նախքան տվյալ հարցի քննարկման և քվեարկության սկսելը:

83.Եթե շահերի բախման առկայության դեպքում ի հայտ են գալիս վիճահարույց հանգամանքներ, ապա համայնքի ավագանին հետաձգում է որոշման կայացումը՝ լրացուցիչ պարզաբանումներ կատարելու նպատակով:

## ԳԼՈՒԽ 21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ (ԶՐԿԵԼՈՒ) ԿԱՐԳԸ

84.Համայնքի պատվավոր քաղաքացու կոչումը պատվավոր կոչում է, որը նախատեսված է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով:

85.Համայնքի պատվավոր քաղաքացու կոչումը շնորհվում է հետևյալ կարգով՝

1) Համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանն արժանանում են, անկախ ազգությունից, քաղաքացիությունից, ռասսայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ դրությունից , այն քաղաքացիները, որոնք իրենց երկարամյա անբասիր աշխատանքով կամ բացառիկ մեծ վաստակով նպաստել են համայնքի բարգավաճմանը, ակնառու ներդրում ունեն համայնքի տնտեսական, մշակութային զարգացման գործում, բացառիկ ավանդ ունեն մշակույթի, արվեստի, գրականության կամ գիտության զարգացման բնագավառում:

2) Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու (զրկելու) առաջարկը համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի ղեկավարը: Համայնքի ղեկավարին նման առաջարկով կարող են դիմել ավագանու անդամները, հասարակական միավորումները, հիմնադրամները, իրավաբանական անձանց միությունները, մշակութային, գիտական, կրթական կազմակերպությունները:

3)Առաջարկ ներկայացնողը պարտավոր է հիմնավորել այն, համակողմանիորեն լուսաբանել համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանը ներկայացվող քաղաքացու կյանքը, գործունեությունը, ներկայացնել համապատասխան նյութեր և քաղաքացու լուսանկարը:

4)Ստացված առաջարկությունները քննարկում է համայքի ավագանին, և նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ որոշում է կայացնում համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին:

5)Համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանն արժանացած անձանց տրվում է վկայական:

6)Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու (զրկելու) մասին համայնքի ավագանու որոշումը հրապարակվում է, հնարավորության դեպքում լուսաբանվում է տեղական զանգվածային լրատվության միջոցներով:

## ԲԱԺԻՆ 5. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

### ԳԼՈՒԽ 22. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

86.Համայնքի ավագանին, իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար, իր որոշմամբ կարող է ստեղծել մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

87.Հանձնաժողովները ստեղծվում են որոշումների նախածների և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ համայնքի ավագանու եզրակացություններ տալու նպատակով:

88.Հանձնաժողովների անդամների կազմը հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ:

### ԳԼՈՒԽ 23. ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱԶՄԸ

89.Մշտական հանձնաժողովները կարող են լինել՝

1)գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողով.

2)սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողով.

3)իրավական հարցերի մշտական հանձնաժողով.

4)ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով.

5) ենթակառուցվածքներին առնչվող հարցերի մշտական հանձնաժողով.

6) խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով:

2.Օրենքով սահմանված կարգով կարող են ստեղծվել նաև այլ մշտական հանձնաժողովներ:

90.Իրենց գործունեությունն իրականացնելու ընթացքում հանձնաժողովները կարող են աշխատանքի մեջ ներգրավել փորձագետների և խորհրդատուների, որոնք իրենց մատուցած ծառայությունների դիմաց կարող են վարձատրվել համայնքի բյուջեից:

### ԳԼՈՒԽ 24. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

91.Ժամանակավոր հանձնաժողովները առանձին որոշման նախագծերի նախնական քննարկման կամ որոշակի իրադարձությունների և փաստերի մասին ավագանուն եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար:

92.Ավագանին ժամանակավոր հանձնաժողով ստեղծելիս սահմանում և նրա խնդիրները, գործունեության ժամկետը և աշխատակարգը:

93.Իր գործունեության արդյունքների մասին ժամանակավոր հանձնաժողովը սահմանված ժամկետում զեկուցում է ավագանու նիստում:

### ԳԼՈՒԽ 25.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

94.Մշտական հանձնաժողովների աշխատանքները համակարգվում են իր կողմից ընդունված աշխատակարգի միջոցով: Հանձնաժողովի կազմից ընտրվում է հանձնաժողովի նախագահ, եթե աշխատակարգով այլ բան նախատեսված չէ:

95.Հանձնաժողովի նախագահի թեկնածությունը հաստատվում է հանձնաժողովի նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ:

96.Մշտական նհանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարում են, եթե դադարել են նրա որպես ավագանու անդամի լիազորությունները:

97.Հանձնաժողովի նախագահը՝

1)նախապատրաստում և վարում է հանձնաժողովի նիստերը.

2)գումարում է հանձնաժողովի արտահերթ նիստերը.

3)հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը.

4)ավագանու նիստին է ներկայացնում հանձնաժողովի եզրակացությունները և առաջարկությունները ուսումնասիրվող հարցի վերաբերյալ.

5)ընթացք է տալիս և պատասխանում է հանձնաժողովին ուղղված դիմումներին.

98.Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում են համաձայն հանձնաժողովի աշխատակարգի.

### ԳԼՈՒԽ 26. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԿԱՐԳԸ

99.Հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում համայնքի ավագանու նստավայրում: Այլ վայրում հանձնաժողովի նիստ կարող է անցկացվել հանձնաժողովի որոշմամբ:

100.Հանձնաժողովի արտահերթ նիստը գումարվում է ըստ անհրաժեշտության՝ նիստը նախաձեռնողի սահմանած ժամկետում, համաձայն հանձնաժողովի աշխատակարգի:

101.Ժամանակավոր հանձնաժողովի հերթական նիստերը գումարվում են հանձնաժողովի կողմից սահմանած ժամկետներում:

### ԳԼՈՒԽ 27. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

102.Հանձնաժողովի նիստում կարող են ներկա գտնվել ավագանու անդամները, համայնքի ղեկավարը և հանձնաժողովի կողմից հրավիրված այլ անձինք:

103.Հանձնաժողովի որոշմամբ հրավիրված անձինք տեղեկացվում են քննարկումներից առնվազն երեք օր առաջ:

### ԳԼՈՒԽ 28. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

104.Հանձնաժողովի նիստը սկսվում է օրակարգի հաստատումով: Մինչև օրակարգի հաստատումն այլ հարցեր չեն քննարկվում:

105.Նիստում հարցերը քննարկվում են հետևյալ հաջորդականությամբ՝

1) հիմնական զեկուցողի ելույթը.

2) հարցեր հիմնական զեկուցողին.

3) հարակից զեկուցողի ելույթը (եթե այդպիսիք կան).

4) հարցեր հարակից զեկուցողին.

5) մտքերի փոխանակություն.

6) հիմնական զեկուցողի եզրափակիչ ելույթը:

106.Հանձնաժողովի նիստում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկությունը կատարվում է հարցի քննարկման ավարտից հետո:

107.Նիստում քվեարկությունները կատարվում են միայն տվյալ հանձնաժողովի անդամների առաջարկությամբ:

108.Հանձնաժողովի անդամը կարող է հրաժարվել քվեարկությանը մասնակցելուց:

109.Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:

110.Նիստի արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի անդամները:

## *ԲԱԺԻՆ 6. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՆ*

### *ԳԼՈՒԽ 29. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ*

111.Համայնքի բյուջեի նախագիծը համայնքի ավագանուն է ներկայացնում համայնքի ղեկավարը: Բյուջեի նախագիծը ներկայացնելուց հետո հանդես են գալիս՝

1)համապատասխան հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը.

2)ըստ ցանկության՝ մյուս հանձնաժողովների մեկական ներկայացուցիչները՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի եզրակացությունը.

112. Համայնքի ավագանու անդամները և վարչական ներկայացուցիչները համայնքի ղեկավարին և մյուս զեկուցողներին հարցեր են տալիս սույն կանոնակարգի 13-րդ հոդվածով սահմանված կարգով, որից հետո տեղի է ունենում մտքերի փոխանակություն սույն կանոնակարգի 14-րդ հոդվածով սահմանված կարգով:

### *ԳԼՈՒԽ 30. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ*

113.Համայնքի ղեկավարը, եռամսյակը մեկ անգամ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն:

114.Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:

115.Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ավագանու նիստում քննարկվում և հաստատվում է աուդիտորական մասնագիտացված կազմակերպության եզրակացության առկայությամբ՝ մինչև ընթացիկ տարվա մարտի 20-ը:

## ԳԼՈՒԽ 31. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

116.Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ներառում է՝

1)տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի հիմնավորվածության վերաբերյալ, դրանց համապատասխան վերլուծությունըհաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի և հաշվետու տարվա համար հաստասված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների միջև.

2)տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին համապատասխան հիմնավորումներով.

3)տեղեկություններ հաշվետու տարում բյուջեի պարտքերի և դրանց սպասարկման վերաբերյալ.

4)այլ տեղեկություններ, որոնք համայնքի ղեկավարն անհրաժեշտ է համարում համայնքի բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար:

117.Համայնքի ավագանու նիստում բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվութունը ներկայացնում է համայնքը ղեկավարը: Զեկուցումներով կարող են հանդես գալ՝

1)համապատասխան հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի եզրակացությունը.

2)ըստ ցանկության՝ մյուս հանձնաժողովների մեկական ներկայացուցիչները՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը:

3) վարչական ներկայացուցիչը:

118. Համայնքի ավագանու անդամները համայնքի ղեկավարին և մյուս զեկուցողներին հարցեր են տալիս սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով, որից հետո տեղի է ունենում մտքերի փոխանակություն՝ սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով:

119.Մտքերի փոխանակության ավարտից հետո քվեարկության է դրվում բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման նախագիծը:

# 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## 32. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

120.Սույն կանոնակարգը կարող է փոփոխվել համայնքի ավագանու որոշմամբ: Ցանկացած կանոնակարգային փոփոխություն պետք է համահունչ լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքին և այլ իրավական ակտերին:

121.Փոփոխությունների ընդունումը պահանջում է ավագանու նիստին ներկա անդամների ձայների ավելի քան երկու երրորդը:

## 33. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

122.Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ղեկավար՝ Բ.Ավետիսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

## ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ

## ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ թիվ 18

28 նոյեմբերի 2016թվական — գյուղ Մեծ Սարիար

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով Մեծ Սարիար համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիար համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին 4729 հոդվածից տրամադրել դրամական օգնություն՝ 75000 /յոթանասունհինգ հազար/ դրամ.

1. Պողոսյան Սիրվարդ 40000 /քառասուն հազար/ դրամ
2. Գասպարյան Սեդա 35000 /երեսունհինգ հազար/ դրամ

Ավագանու անդամներ՝

1.Ա.Գաֆարյան կողմ
2.Վ. Վարդապետյան կողմ
3.Ս. Պողոսյան կողմ
4.Կ. Մնացականյան կողմ
5. Ա. Նիկողոսյան կողմ

*Մեծ Սարիար համայնքի ղեկավար* Բ.Ա[illegible]յան

28 նոյեմբերի 2016 թվական
գյուղ Մեծ Սարիար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 19-Ն

<< 28 >> նոյեմբերի 2016 թվական

գյուղ Մեծ Սարիար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՍԱՐԻԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 15-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիարի համայնքի ավագանին

**որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիարի համայնքի վարչական տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել՝ համաձայն հավելվածի։
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիարի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 16-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիարի համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 13-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 15-Ն որոշումը։

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Վահան Վարդապետյան
Սամվել Պողոսյան
Արայիկ Գաֆարյան
Արթուր Նիկողոսյան
Կարեն Մնացականյան

ՄԵԾ ՍԱՐԻԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Բարիկ Ավետիսյան

<<28>> նոյեմբերի 2016 թվական
գ. Մեծ Սարիար

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 19-Ն ՈՐՈՇՄԱՆ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1)հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,

2) սույն կետի ,,ա,, ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ինը հազար դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տաս հազար դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ինը հարյուր դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ինը հարյուր դրամ:

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մեկ հազար հինգ հարյուր դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ:
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ:
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ութ հազար դրամ:
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար դրամ:
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար դրամ:
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ:
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ:
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ութ հազար դրամ:
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար դրամ:
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար դրամ:
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է երեսուն հազար դրամ:

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ:

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ:

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ:

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար դրամ:

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ:

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար քսանհինգ հազար դրամ:

5) ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ:

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար դրամ:

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ:

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ:

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ:

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար տասներկու հազար դրամ:

6.Համայնքային սեփականությու հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար տեղական տուրք սահմանվում է՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ մեկ հարյուր դրամ :

2) ուրաքանչյուր մեկ օրվա համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ :

3) մեկ շաբաթվա համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ :

4) մեկ ամսվա համար՝ տաս հազար դրամ :

5) մեկ տարվա համար՝ քառասուն հազար դրամ :

7. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ:

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ:

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ:

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ:

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ:

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

9.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ:

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ:

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

4) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

10. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

11. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

12. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ երկու հազար դրամ:

13. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ հիսուն հազար դրամ:

14. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է երեք հազար դրամ:

15.Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ մեկ հարյուր հազար դրամ:

16. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

1) 3 հեկտարից մինչև 5 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ:

2) 5 հեկտարից մինչև 7 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ:

3) 7 հեկտարից մինչև 10 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ:

4) 10 հեկտարից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տաս միլիոն դրամ:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել երկու հազար դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ մեկ հազար դրամ:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՛մեկ հազար դրամ;

4.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը սահմանվում է.

1) կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող եւ (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական երկու հարյուր դրամ:

2) ոչ կենցաղային եւ խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ հինգ հարյուր դրամ:

ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ...ԱԲԱԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 20

<< 28 >> նոյեմբերի 2016 թվական — գյուղ Մեծ Սարիար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 16 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիարի համայնքի ղեկավարի 2017 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 26 տոկոսի չափով՝ 172000 (հարյուր յոթանասուներկու հազար ) դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիար համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 16 -ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիար համայնքի ղեկավարի 2016 թվականի վարձատրության չափը սահմանելու և համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 15 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 16 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Վահան Վարդապետյան ..........

Սամվել Պողոսյան ..........

Արայիկ Գաֆարյան ..........

Արթուր Նիկողոսյան ..........

Կարեն Մնացականյան ..........

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Բաբիկ Ավետիսյան

«28» նոյեմբերի 2016 թվական
գյուղ Մեծ Սարիար



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ N 21

<< 28 >> նոյեմբերի 2016 թվական — գյուղ Մեծ Սարիար

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՍԱՐԻԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 18 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, ««Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիարի համայնքի ավագանին

որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիարի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2017 թվականի քանակը՝ 3։
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիարի համայնքապետարանի աշխատակազմի 2017 թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիարի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիարի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2016 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 16 -ի թիվ 21 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 18 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Վահան Վարդապետյան ..................
Սամվել Պողոսյան ..................
Արայիկ Գաֆարյան ..................
Արթուր Նիկողոսյան ..................
Կարեն Մնացականյան ..................

Համայնքի ղեկավար — Բաբիկ Ավետիսյան

28 նոյեմբերի 2016 թվական
գյուղ Մեծ Սարիար

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Մեծ Սարիար համայնքի ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 28 -ի թիվ 21-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՍԱՐԻԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%) |
|---|---|---|---|---|
| Հայեցողական պաշտոններ | | | | |
| 1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 0 | 0 | 0 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | | | |
| 2 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 131,000 | 76,16 |
| 3 | Առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 125,000 | 72,67 |
| 5 | | | | |
| Տեխնիկական սպասարկման անձնակազմ | | | | |
| 6 | Համակարգչային օպերատոր | 1 | 80,000 | 46,51 |
| Ընդամենը | | 3 | 336000 | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱԲԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 22

<< 28>> նոյեմբերի 2016 թվական — գյուղ Մեծ Սարիար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիար համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիար համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ - 5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Վահան Վարդապետյան ...
Սամվել Պողոսյան ...
Արայիկ Գաֆարյան ...
Արթուր Նիկողոսյան ...
Կարեն Մնացականյան ...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Բաբիկ Ավետիսյան

<<28>> նոյեմբերի 2016 թվական
գյուղ Մեծ Սարիարի

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 22 ՈՐՈՇՄԱՆ

| | անվանումը | քանակը | արժեքը | գույքի վիճակը |
|---|---|---|---|---|
| 1 | Քարթրիջ | 1հատ | 32000 | |
| 2 | Վիտալյ կշեռք | 1հատ | - | անսարք |
| 3 | ՑՄՁ թարծիչ | 1 հատ | - | անսարք |
| 4 | Գրասեղան | 4 հատ | - | մաշված |
| 5 | Աթոռ | 6 հատ | - | մաշված |
| 6 | Երկաթյա գրապահարան | 4 հատ | - | մաշված |
| 7 | Բազկաթոռ | 3 հատ | - | մաշված |
| 8 | Գյուղապետարանի փայտյա | 1 հատ | - | մաշված |
| 9 | Տնակներ | 4 հատ | - | - |
| 10 | Կերախոհանոցի շենք | 1 հատ | - | կիսակառույց |
| 11 | Խոտհնձիչ Ե 302 | 1 հատ | - | անսարք |
| 12 | Ասֆալտապատ ճանապարհ | 1 կմ | - | բարվոք |
| 13 | Գրքային ֆոնդ | 3795 հատ | - | - |
| 14 | Համակարգիչ P4 | 1 հատ | 235000դրամ | սարքին |
| 15 | Մոնիտոր LG 1719S | 1 հատ | 68000դրամ | սարքին |
| 16 | Ալյումինե բիդոն | 148 հատ | - | |
| 17 | Գյուղամիջյան ճանապարհ | 3 կմ | - | - |
| 18 | Տպիչ « SAMSUNG SCX 4300/XEV» | 1 հատ | 64600դրամ | սարքին |
| 19 | Համակարգչի մարտկոց | 1 հատ | 25000դրամ | անսարք |
| 20 | Կիսակառույց բնակարան | 1 հատ | - | կիսակառույց |
| 21 | Կոշտ սկավառակ 250GB | 1 հատ | 19000 | սարքին |
| 22 | Անխափան սնուցման սարք | 1 հատ | 20500 | սարքին |
| 23 | երկարացման լար 1.8 մ | 1 հատ | 2000 | սարքին |
| 24 | Համակարգիչ G-1840 | 1հատ | 117000 | սարքին |
| 25 | մկնիկ | 1հատ | 2000 | սարքին |
| 26 | Համակարգչի ստեղնաշար | 2 հատ | 7000 | սարքին |
| 27 | Դինամիկ | 1հատ | 10000 | սարքին |
| 28 | Մոնիտոր | 1հատ | 62300 | սարքին |
| 29 | Համակարգիչ | 1հատ | 395000 | սարքին |
| 30 | Լազերային տպիչ | 1հատ | 108252 | սարքին |
| 31 | Սկաներ | 1հատ | 30846 | սարքին |
| 32 | Անխափան սնուցման սարք | 1 հատ | 29100 | սարքին |
| 33 | Արտաքին կրիչ | 1 հատ | 58700 | սարքին |
| 34 | Ցանցային կոնցենտրատոր | 1 հատ | 12800 | սարքին |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 35 | մալուխ | 1 հատ | 8803 | սարքին |
| 36 | միակցիչ | 12 մետր | 384 | սարքին |
| 37 | խրոցակ | 1 հատ | 2600 | սարքին |
| 38 | Ցանցային կցորդիչ | 2 հատ | 1340 | սարքին |
| 39 | Մլուխի ամրակ | 150 հատ | 1320 | սարքին |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 1313545 | |

Մեծ Սարիար համայնքի ղեկավար Բ.Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 23-Ն

<< 28 >> նոյեմբերի 2016 թվական

գյուղ Մեծ Սարիար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՍԱՐԻԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիարի համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Սարիարի համայնքի 2017 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Վահան Վարդապետյան
Սամվել Պողոսյան
Արայիկ Գասպարյան
Արթուր Նիկողոսյան
Կարեն Մնացականյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Բարիկ Ավետիսյան

<<28>> նոյեմբերի 2016 թվական
գյուղ Մեծ Սարիար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ
նոյեմբերի 28-Ի ԹԻՎ 23-Ն ՈՐՈՇՄԱՆ

1.Եկամտային մաս

| Հոդված | Եկամտատեսակները | Պլան |
|---|---|---|
| 7131 | Գույքահարկ շենք շինություն | 17.1 |
| 7131 | Հողի հարկ | 1291.8 |
| 7136 | Գույքահարկ փոխադրամիջոցներից | 663.7 |
| 71452 | Տեղական տուրքեր | 0 |
| 7300 | Դոտացիա | 6321.2 |
| 7415 | Վարձակալական հողերի վարձավճար | 497.0 |
| | Ընդամենը | 8790.8 |

2. Ծախսային մաս՝

| Հոդված | Բովանդակություն | Պլան |
|---|---|---|
| 4111 | Աշխատավարձ | 6780,0 |
| 4112 | Պարգևադրում | 521,0 |
| 4212 | Էներգետիկ ծառ. | 160,0 |
| 4214 | Կապի ծառայություն | 90,0 |
| 4221 | Ներքին գործուղում | 100,0 |
| 4234 | Տեղեկատվական ծառայություն | 40,0 |
| 4252 | Մեքենաների սարքավորումների ընթ. նորոգում | 40,0 |
| 4261 | Գրասենյակային նյութեր և հագուստ | 100,0 |
| 4269 | Հատուկ նպատակային նյութեր | 150.0 |
| 4729 | Այլ նպաստներ բյուջեից | 300.0 |
| 4823 | Պարտադիր վճար | 20,0 |
| 4891 | Պահուստային ֆոնդ | 489,8 |
| | Ընդամենը | 8790,8 |

Տարեսկզբի ազատ մնացորդ վարչական մաս՝ 0.0
Ֆոնդային մաս՝ 0.0

ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ

28 նոյեմբեր 2016թ.